



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ
ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Վայոց Ձորի մարզի Գլաձոր համայնք
ՀՀ, Վայոց Ձորի մարզ, հ. Գլաձոր, (0281) 23446, gladzor.gladzor@mail.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒՆՎԱՐԻ 2021 թվականի N 04-Ա

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22-Ի ԹԻՎ 244-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

Գլաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 22-ի «Գլաձոր համայնքի Գետափ բնակավայրում գտնվող, քաղաքացի Հայկ Ալեքսանի Ավագյանին սեփականության իրավունքով պատկանող արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողամասում ինքնակամ կառուցված շինությունը օրինականացնելու և Գլաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի մարտի 20-ի թիվ 83-Ա որոշումն անվավեր ճանաչելու մասին» թիվ 244-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1) վերնագրից հանել «ԵՎ ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 20-Ի ԹԻՎ 83-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ» բառերը,
- 2) օրենքներին հղումներից հանել ««Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասով,» բառերը,
- 3) հիմնական մասից հանել «4. Գլաձոր համայնքի ղեկավարի 2020 թվականի մարտի 20-ի՝ «Հայկ Ալեքսանի Ավագյանին շինարարության թույլտվություն տալու մասին» թիվ 83-Ա որոշումը ճանաչել անվավեր:» կետը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ

2021թ. հունվարի 18
Գլաձոր համայնք

